Արձանագրություն N3
ՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-01/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Արմավիր
Շահումյան 3

22.09.2025թ.
ժամը 11^{00}

Նիստին մասնակցում էին՝

Նախագահ՝ Արթուր Դավթյան
Անդամներ՝ Մարինե Ազարյան
Լարիսա Համբարձյան
Քարտուղար՝ Մերի Բարեղամյան

1. Ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հայտերում հայտնաբերված անհամապատասխանությունները շտկելու մասին

Արթուր Դավթյան

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել էր:

Քարտուղարը (գնումների համակարգողը) էլեկտրոնային աճուրդի իրականացման համակարգով ծանուցել է «Նատալի ֆարմ» ՍՊԸ և «Ար Ջի ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ մասնակիցներին հայտում առկա անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, մասնակցի հայտը բոլոր չափաբաժիններով գնահատվում է բավարար:

«Ար Ջի ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, մասնակցի հայտը 83-րդ չափաբաժնի մասով գնահատվում է բավարար, իսկ 34, 72, 81 չափաբաժիններով մասով հայտը գնահատվում է անբավարար, դրանցով առաջարկվող դեղորայքը չի համապատասխանում հրավերի պահանջներին, առաջարկող դեղերը կամ դրանց մի մասը գրանցված չեն ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում):

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի ամփոփման մասին

Արթուր Դավթյան

2.1 Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընտրված մասնակից են ճանաչվում.

- չափաբաժին 3,6,7,8,13,23,24,25,40,41,43,44,55,56,57,62,71- «Նատալի ֆարմ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 52,53,66 - «Ալֆա-ֆարմ իմպորտ» ՓԲԸ -ն,
- չափաբաժին 14,15,20,28,42- «Արֆարմացիա» ՓԲԸ-ն
- չափաբաժին 10,11,31,38 - «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն,
- չափաբաժին 16,47,48,58,64,67,73 - «Արփիմեդ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 83 - «Ար Ջի ընդ Էյ Ջեյ Գրուպ»ՍՊԸ -ն,
- չափաբաժին 4,21,75 - «Դեղաբազա Ե» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 35,45,68 - «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 32,37 - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 12,30 - «Վագա ֆարմ» ՍՊԸ -ն,
- չափաբաժին 33 - «Զայնա Մոլլ » ՍՊԸ -ն:

2.2 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 1, 2, 5, 9, 17, 18, 19, 22, 26, 27, 36, 46, 50, 51, 54, 59, 60, 61, 63, 65, 70, 74, 76, 77, 78, 79, 82, 84, 85 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների գնառաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված գները:

2.3 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 39, 49 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ մասնակիցների կողմից ներկայացվել են հավասար նվազագույն գնային առաջարկներ:

2.4 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 29, 69, 80 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ ոչ մի հայտ չի ներկայացվել:

2.5 Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 34, 72, 81 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

2.6 ՀՀ «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ **Արթուր Դավթյան**

անդամներ՝ **Մարինե Ազարյան**

Լարիսա Համբարձյան

քարտուղար՝ **Մերի Բարեղամյան**